

զուժարեցաւ վճռելու համար՝ յայտարարեց որ գրեթէ ստոյգ է թէ՛ Վալէնդինոյի պատկերը Ռաֆայէլին չէ, և թէ՛ այս պատկերը ոչ եթէ զեղեար Պորճին՝ այլ անծանօթ ազնուական մը կը ներկայացընէր. և թէ՛ պատմական թէ՛ արւեստական տեսակետով չէր արժէր անոր փոխանակ արուած պատկերները. վերջապէս թէ՛ այս փոխանակութիւնը մեծապէս շահաւոր էր թանգարանին ։

Այն ատեն իշխանը փութացուց Վալէնդինոյի վաճառման դաշնադրութիւնըն և բանագնացութիւնը. կ'ըսեն թէ ամբողջ միլիոն մը պահանջեց Պարոն Ռաշիլ-տի արձանագործը համոզեց իշխանը որ 600,000ի թողու, իշխանը նեղը միտք տեսնելով՝ հաւանեցաւ, բնորոշեցաւ և Վալէնդինո պատկերը ծախուեցաւ. ճիշդ այն ժամանակները՝ մասնաժողովը սկսաւ վճռոյն հակառակ գործել, և հետեւեալ րարը փոխանակութիւնը չուզեց թողլ տալ. բայց փոխանակութիւնն արդէն եղած էր. պատկերը վաճառուէր էր ի Հոլով. և զաղդիացի արձանագործը կ'ըսեն թէ զետպանաստան մը ծածուկ հաշտութեամբ արդէն սահմանադրիւնն անցուցեր էր պատկերը ։ Պորկէզէ իշխանը կէս միլիոնը զրպանը դրաւ. արձանագործը 100,000 ֆռ. իբր միջնորդէր. և այժմ՝ Եւրոպայի ամենէն տաւրի մեծ տեղանաւորը՝ ի Բարիզ իւր պալատին թանգարանին մէջ ցոյց կու տայ իւր բարեկամաց Պորկէզէ բնասնեաց թանգարանին հաւաքածուին «տկունքը» ։

Այս վաճառման առթիւ՝ լրագիրք շատ խօսեցան Պորկէզէ թանգարանին վրայ, որ չորս դար է շատ ճոխացած է. ամէն դպրոցը, բոլոր մեծամեծ վարպետները անոյ ներկայացած են. նախնեաց պարզամիտ և ակործելի նկարները՝ Դիքիա, Նոսի պայծառ և փափուկ պատկերներուն հետ խառն են. խիստ փերուճիպոյին հեշտասէր ֆորրէճնիոյի ձեռն կը կարկատէ. քաղցր և գոգտրիկն Ռաֆայէլ՝ դուրս կը ցատկէ դաժան ֆարալանճիոյի քով. զուարթն Ռուպէնս՝ կը նայի ի խորհրդականն Էլբարտո. փափկասէրն և կանացին Ալպանո՝ կը ժպտի առ վայրենին Սալվադոր Ռոզա ։ Այս թանգարանին որմնոց վրայ՝ զեղարուեստից բոլոր վանդակ պատմութիւնն զրոշմեալ է այն նկարներուն վրայ՝ զեղեցիկին փառաւոր աւանդութիւնը կը տեսնուի. զարմանաքանչ ներդաշնակութիւն մ'է զուեաց և ձեռք ընդ որ պարտ է զարմանալ միայն և հիանալ ։

ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ԱՐԿԱԾՔ

Նշանաւոր խաղացի տնտեսապէս մը՝ վերջերս հանդիպած երկաթուղոյ արկածից վրայ հետեւեալ խորհրդածութիւնքն կ'ընէ ։

« Որչափ ալ տարօրինակ թուի ոմանց յայտնապէս կը զուրցեմ՝ թէ ամենեւին չեմ՝ զարմանար՝ երբ կը լսեմ՝ որ երբեմն երկաթուղեաց վրայ ձախորդութիւններ կը պատահին, այլ կը զարմանամ մանաւանդ որ այս արկածք ի՛նչպէս կ'ըլլայ՝ որ հազիւ երբէք կը հանդիպին ։

Երբ մտածենք որ ամէն օր 250 հազար քիլոմէտր երկայնութեամբ երկաթ-ուղեւոց վրայ 45—70 քիլոմէտր արագութեամբ կը վազեն անդադար 30,000 ճանապարհորդաց շողեկաւոր՝ առ նուազն երկու միլիոն հոգի փոխադրելով, և այս ամէնը հանապազօրեայ 40,000 միանաւոց շողեկաւորաց հետ այնպէս կարգաւորել՝ որ ընտւ արկած մը չհանդիպի՝ կարծեմ բուսական զգաւոր քորձ և ժամացանկը յօրինել վայրկեաններու մասանց ամենամեծ ճշգրտեամբ, զուգադիպութիւններն, մեկնումներն և ժամանումներն աշխարհիս չորս կողմէն, ժողովուրդներն և երբեմն նաև քառակոն զատ 'ի վեր ուղիներու մէջ այն 200 կամ 300 տակառաշափ ծանրութեամբ կառքը կատարելով՝ միմիւր և ասորերկրեայ երկայն անցքերու մէջ՝ երբեմն նաև այնչափ նեղ՝ որ շողեկաւոր մը հազիւ կրնայ անցնիլ, այս ամէնը ճշգրտութեամբ կատարելը՝ քառակոն մեծ գործ է ։

« Երբ մտածենք նաև թէ երկաթուղեաց յառաջադիմութիւնը այնքան քիչ ժամանակի մէջ զարգացաւ՝ որ գեռ քիչ ատեն է 'ի գերեզման իջաւ ։ Ատոյ՞ թիւեր նշանաւոր դիւանագէտը՝ որ երեսփոխանական հռչակաւոր բանտիօսութեան մը մէջ կը մարգարէանար որ երկաթուղին պարզ մանկական խաղաշիկ մը պիտի ըլլար՝ չենք կրնար մեր զարմանքը և ըսենք նաև յարգանքը չընծայել այն հսկայ յարալլ յառաջադիմութեան՝ զոր բարձր հանճարներ կայծակի արագութեամբ և այնչափ թուաբանական ճշգրտութեամբ լուծեցին և գտան ։

Կը մտածենք արգեօք ընթերցողք թէ իրենց և սիրելեաց կեանքը ռ'ըչափ զանազան և բարակ թելերէ կախում է՝ երբ իրենք գիրենք երկաթուղեաց կը յանձնեն ։ Թողլով զայլս՝ վայրկեան մը նշաններուն խնդրով զլազիւնք ։ Մեքենագործին մէկ սխալ ընթերցումը՝ այն զանազան գունաւորեալ շրջանակաց վրայ որոնք կ'ազգարարեն ուղւոյն բաց կամ փոք ըլլալը՝ հարիւրաւոր կամ հազարաւոր ընտանիքներ սուգի մէջ կրնայ ձգել ։ շատ լաւ արդ շատ տարի չէ որ երկաթուղւոյ վարչութիւնք իրենց պաշտօնեայնները կամ մեքենագործներն ընդունած ժամանակ՝ քննութեան մը կ'ենթարկեն ։ այս քննութիւնը կը կատարուի աչաց վրայ ։ Աչաց տեստի մը զարմանալի հիւանդութիւն կայ՝ առկից բռնուողք՝ քիչ մը հեռաւորութեամբ գոյները չեն կրնար զանազանել՝ այլ կը խառնակեն ։ այս հիւանդութիւնը կը կոչեն անգորիացիք (colour blindness), կուրութիւն գունոց ։ Արդ պէտք է գիտնալ որ եթէ ըստ գիպաց առնունք հարիւր հոգի՝ առ նուազն վեցը այս պակասութիւնն ունին ։ ո՛վ գիտէ թէ այս քննութիւնը սկսելէն առաջ հանդիպած ձախորդութեանց քանի՞ն այս պակասութեան հետեւանք եղած է ։

« Երկաթուղւոյ նոր դրութեան ուրիշ մէկ յատկութիւնն ալ է՝ ըստ կարելոյն մարդու տեղ մեքենան գործածել ։ ուստի գործիւր որչափ կատարեալ ինքնաշարժ ըլլայ՝ այնչափ ալ առելի քիչ խելք պէտք կ'ըլլայ զայն գործածելու համար ։ ֆուսք, սիւսմունք և անճշգրտութիւնք ալ համեմատաբար կը նուազին » ։